

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.04.2021թ. թիվ 2112563593 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 27 >> 04 2021թ. 7-13- 6811

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Անի Սահակյանի ՄԴ/32497-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Քաղաքացի Անի Սահակյանը (ծանուցման հասցե՝ ք.Երևան, Սարյան փողոց, 24-րդ շենք, 3-րդ բնակարան) դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.04.2021թ. թիվ 2112563593 որոշումը՝ նշելով, որ տրանսպորտային միջոցը տեղակայել է երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ ավտոմոբիլի անսարքության պատճառով:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը 14.04.2021թ. թիվ 2112563593 որոշումը բեկանելու հիմք չի կարող հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի /երթևեկելի մասի տեղային լայնացում/, որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր: Որոշման 22-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ <<Վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում>>, իսկ նույն որոշման 23-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ <<Վթարային լուսային ազդանշանը միացնելուց հետո (ինչպես նաև, երբ այն անսարք է կամ բացակայում է) անհապաղ պետք է տեղադրվի «Վթարային կանգառ» ճանաչման նշանը (թարթող կարմիր լապտերիկ)՝ կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում>>: Նույն որոշման 83-րդ կետի համաձայն՝ կանգառն արգելված վայրում հարկադրված կանգառ կատարելու դեպքում կանոնների 22-րդ և 23-րդ կետերի պահանջները կատարելուց հետո վարորդը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տրանսպորտային միջոցն այդ վայրից դուրս բերելու համար: << կառավարության

28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 25-րդ կետի համաձայն՝ արգելվում է առավելություն ստանալու, ինչպես նաև կանգառն արգելված վայրերում կանգառ կատարելու (բացառությամբ հարկադրված կանգառի) նպատակով վթարային ազդանշանի օգտագործումը: Վերը նշված կանոնների չպահպանելը բացառում է վարորդի կանգառի հարկադրված լինելու հանգամանքը, իսկ կանգառը հարկադրված կատարած լինելու ապացուցման բեռը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում կրում է վարորդը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութը փաստում է, որ դիմումատուի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցը Երևան քաղաքի Սարյան – Կ.Դեմիրճյան փողոցների խաչմերուկի հատվածում 24.03.2021թ. ժամը 07:13:01-րդ վայրկյանից մինչև 07:14:02 վայրկյանը՝ 61 վայրկյան տևողությամբ տեղակայված է երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ և տեղադրված չի «Վթարային կանգառ» ճանաչման նշանը:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի հատկանիշները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 14.04.2021թ. թիվ 2112563593 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Անի Սահակյանին:



Ե.Կարապետյան